ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎ ԿԱՐԼՈՎԻ ՎԱՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ

1984 թվականի դեկտեմբերի 10—13-ը Չեխոսլովակիայի Կարլովի Վարի քաղաքում տեղի ունեցավ «Կարլովի Վարի 6» ժողովը, որին մասնակցում էին Արևելյան Եվրոպայի, ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի Եկեղեցիների ավելի քան 60 պատգամավորներ: Ժողովը թվով վեցերորդն էր (առաջինը տեղի է ունեցել 1962 թ.): Այս տարիների ընթացքում ժողովները փոխնիփոխ գումարվել են ԱՄՆ-ում և Չեխոսլովակիայում: Այս ժողովին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից մասնակցում էր Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես եպս. Պոլատյանը: Ահա թե սրբազան հայրը ինչ ասաց մեր թղթակցին այդ ժողովի մասին.

«Ժողովը ղեկավարում էին ԱՄՆ-ի ներկայացուցիչ դոկ. Էլվրի Բոստը և հունգարացի եպիսկոպոս դոկ. Կարլի Տոթը:

Ժողովականները ժողովի ընթացքում ունկընդրեցին ժողովի օրակարգին առնչվող երկու շատ կարևոր զեկուցումներ: Ժողովի օրակարգի գլխավոր թեման էր. «Եկեղեցիների դերը Արևելքի և Արևմուտքի միջև խաղաղության և արդարության հաստատման գործում»: Այս թեմայի շուրջ ելույթներ ունեցան դոկ. Կարլի Տոթը (Արևելյան կողմի ներկայացուցիչ) և դոկ. Վիլյամ Թոմսոնը (Արևմտյան կողմի ներկայացուցիչ): Երկու կողմերի ելույթները լսելուց հետո պատգամավորները բաժանվեցին երկու խառը (Արևելյան և Արևմտյան կողմերի ներկայացուցիչներ) խմբերի՝ քննելու համար խնդրո առարկա թեման և ուղիներ որոնելու Եկեղեցիների միջոցով համերաշխության հասնելու համար:

Բոլոր պատգամավորները, որպես Քրիստոնյաներ, իրենց պարտավորված պետք է զգան ծառայելու և իրենց նպաստը բերելու՝ աշխարհում խաղաղության ավնիվ գաղափարի հաստատման գործին:

Ժողովականները, նկատի ունենալով այսօրվա մարդկությանն սպառնացող վտանգները, ինչպես նաև երկնքում և երկրի վրա սպառազինության մրցավազքի օրավուր աճը, և մի անգամ ևս համոզվելով երկրագնդին սպառնացող լարված և կործանարար վիճակի գոյության մեջ, եկան այն եզրակացության, որ Աստուծո պարգևը՝ կյանքը, Աստուծո ստեղծագործությունը, վտանգվում է հետևյալ պատճառներով.

1. Արևելքի և Արևմուտքի միջև գոյություն ունեցող անհասկացողությունը:

2. Մի շարք երկրների ապահով վիճակի հաստատումը այլ երկրներին կոհաբերելու հաշվին:

3. Տիեզերքը սպառազինելու և աստղային պատերազմ հրահրելու մարդկանց ցնորքը:

4. Միջուկային վենքի տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացումը ոչ խաղաղ նպատակների համար:

5. Զենքի արտադրության աճը, վաճառքը և տեղադրումը: Այս ամենի համար տրամադրված գումարներով կարելի է աշխարհում վերացնել սովն ու աղքատությունը:

6. Մարդուն տրված ուժը ի վնաս ուրիշներին օգտագործելու միտումը:

7. Պատերազմն անտեսելու մարդկային անմտությունը:

8. Երևակայական թշնամիներ ստեղծելու ոգին:

Որպես Եկեղեցիների ներկայացուցիչներ ժողովականները զգում են խաղաղության ամրապնդման գործում իրենց ունեցած հնարավորությունների սահմանափակվածությունը: Եվ այսօրվա տագնապալի և լարված իրավիճակում մարդկությունն իր հույսը դնում է միայն Հիսուս Քրիստոսի վրա:

Կրկին անգամ լսվում է Ավետարանի խաղաղության և արդարության պատգամը: Բազմիցս խոսվում է տարբեր գաղափարախոսությունների և սիստեմների մեջ ապրող մարդկանց սերտացման և նրանց միջև բարեկամական երկխոսություն հաստատելու մասին:

Ժողովը ողջունում է ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի արտաքին գործերի մինիստրների՝ Շուլցի և Գրոմիկոյի միջև տեղի ունենալիք խորհրդակցությունը և այդ առթիվ մասնավոր նամակներ հղում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի նախագահներ Չեռնենկոյին և Ռեյգանին, ինչպես նաև Ստոկհոլմի «Զինաթափության և վստահության խորհրդաժողով»-ին՝ մաղթելով նրանց հաջող շարունակություն»—քաղաքական փոխըմբռման բնագավառում:

Վերջում ժողովականները բաժանվեցին իրարից հետևյալ եզրակացություն-որոշումով.

1. Արևմուտքի և Արևելքի Եկեղեցիների միջև ստեղծել փոխբարեկամական համայնքներ:

2. Էլբայի ափին, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի բանակների հանդիպման վայրում, կատարել քրիստոնեական տոնախմբություն:

3. Դաստիարակել երիտասարդությանը խաղաղության ոգով:

4. Քաջալերել էկումենիկ ծրագրերի կատարումը ժողովուրդների միջև խաղաղությունը ամրապնդելու նպատակով:

5. Ջանալ լուծում գտնել աշխարհում գոյություն ունեցող սովյալների հարցին:

6. Աշխատանքներ տանել ամբողջ աշխարհում միջուկային վենքի կանխարգելման գործում:

7. Աստուծո պատգամի համաձայն շարունակել և ուժեղացնել պայքարը ի խնդիր խաղաղության:

Ժողովն իր աշխատանքները փակում է ապագայի լավատեսության ծրագրերով, և առաջարկվում է, որ բոլոր Եկեղեցիները տևապես պայքարեն հանուն աշխարհի կայուն խաղաղության»: